



ԱՐԾՈՒՒ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹԻՒՆՅԱՆ, ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՊՈՒՐԱՆՈՒՄ
ՏԵՐՈՒՄԻՆԻ ՄԵՆԵՍՏԵՆԵՆ ԵՎ ԴԱՐԱՆ

ԽՐԻՍՏՈՍ ԿԱՏՐԵՆԱՆՈՍ
ՄԿՐՏԻՉ ԿԱՐԻԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1864

ՇՐՋԱՆ ԵՎ ԵՅԵՐԱՐԻ

ԹԻՒ 2

Ի ՏԳԱՐԱՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՄԵՆ
Ի ԿԱՐԱԳ



THE UNIVERSITY OF CHICAGO

OFFICE OF THE PRESIDENT
550 EAST 58TH STREET, CHICAGO, ILL.

CHICAGO, ILL., JANUARY 1, 1891

1891

CHICAGO, ILL., JANUARY 1, 1891

1891

CHICAGO, ILL., JANUARY 1, 1891

լայ աւագոյ շինուի, հարկաւ անձրեւներն, գետերն եւ հողմերն, զայն խախտելով կտապալեն եւ մեծ կործանումն կլինի. (1) եւ բոլոր ծախքերն եւ աշխատութիւնքն ալ պարապը կերթայ: Եթէ վանքերն ազգին բարոյական զարգացմանը ծառայելու պարտաւոր են, եւ թէ նոցա մէջ ընծայարան, Թանգարան, Տպարան, եւ Հիւանդանոց եւ ասոնց պէս ուրիշ հաստատութիւններ ըստ սահմանադրութե կանոնի պիտի կանգնուին, ուրեմն ամէնէն առաջ իմաստութեամբ քննեմք տեսնամք թէ վանքերն ի՞նչ ողբալի դրութեան զեղծմանց եւ անկարգութեանց մէջ են, մի թէ կարելի է այնպիսի հաստատութիւնք կանգնել եւ ի նոցանէ պէտք եղած օգուտներն քաղել, քանի որ նոյն անկարգութեանց աւաղներն ամենայն բարոյական զարգացմանց միշտ եւ շարունակ մեծ արգելք եւ խոչընդոտ մը պիտի լինին: Որոց վերայօք պէտք է մանրամասն նկարագրութիւն ընելով Վեդրոնական Վարչութեան եւ Վանօրէից խորհրդոյն ներկայացնեմք, որ ազգին այս ամէնէն աւելի կարեւոր եղած զործին հոգ տանելով, պէտք եղած տնօրէնութիւններն ընեն, որ չլինի թէ կանգնուելիք հաստատութիւնքն քիչ ժամանակէն փլչին ու կործանին:

Ի՞նչ են վանքերու մէջի եղած անկարգութիւնքն եւ զեղծմունքն:

Սովորութիւն եղած է որ, ընդհանրապէս քաղաքաց եւ գիւղօրէից մէջ որչափ որ զեղի բարուց տէր գիտեմով անձինք կան, որոնք ածպաշտութեան ոգիէն բոլորովին թուլցած լինելով, վանք ըսելով կիմանան անյագ որկրամոլութեան, գիտեմոլութեան, անառակ երգեր եր-

(1) Մատթ. 1. 27:

գելու եւ տեսակ տեսակ քնարներ փող եւ թմբուկ հնչեցընելու տեղ . վերջապէս այն սուրբ վայրերն երթալու պատրաստուած ժամանակնին՝ ինքզինքնին իրենց լէֆֆին « ֆֆին » զեղխութեանց բոլորովին անձանատուութիւնով , քաղաքաց եւ գիւղօրէից մէջ քիչ շատ ունեցած պատկառանքնին զգաստութիւննին ալ մէկ դի կընեն . ալ անկեց ետեւ ոչ քաղաքավարութիւն կճանչնան , ոչ մարդկութիւն , ոչ խիղճ , ոչ բարեպաշտութիւն եւ ոչ մարդավարութիւն . մէկ խօսքով « Եօթն այլ այս չար եւս քան զինքեանս իրենց սրտին մէջ բնակեցնելէն ետեւ , (1) » այս անուամբ միայն ուխտաւորներն , ըստ բանի Տեառն տէր տէր կըսեն . ու սրտիւք , գործքով եւ արդեամբ բոլորովին անկէց հեռացած են . որոնք զարնան ժամանակէն սկսեալ մինչեւ աշուն վանքերուն դռունէն ներս կըստեմն այսպիսի սանձարձակ կերպով : (2) Այսինքն , Ամէն ուրբաթ եւ շաբաթ օրերն ոմանք իւրեանց ընտանեօք , ոմանք քանի մը հոգի ընկերանալով , գին իի , օղի ի կա-

(1) « Լուկ » . լուկ . 26 :

(2) Մեր ընթերցողներն չկարծեն թէ չափազանցութեամբ կըստեմն : ըստ որում մեր ըսածներն այնպիսի նկարագրութիւն մըն է , որուն աշտութեան եւ ստուգութեանը ամէն ականատես անձինք կ'իկայեն : Բնիկ հանուր ազգին յառաջադիմութեան արդէնք երդ այսպիսի վէրք մը տեսնալէն ետեւ , անհոգութեամբ լուրն ծածկել եւ չյայտնելն ալ արդարեւ աւելի ցաւալի եւ աննշան է մեզի . մանաւանդ այս միջոցին , որ Կեդրոնական վարչութիւնն ըստ սահմանադրութեան վանօրէից բարեկարգութեանց համար պէտք եղած կարգադրութիւններն ի գործ դնելու լայ լինելով , այսպիսի արգելքներն ալ յառաջուց իմացնելու պարտաւոր եմք . որ այն ալ ըստ այնմ պէտք է եղածն դիւրութեամբ ժամանակին տնօրինէ :

րասներն եւ տիկերն գրաստներու վերայ բառնալով խումբ
խումբ խումբ բազմութեամբ կը գիմեն վանքերն , որոց
սենեակներն , բակերն մինչեւ եկեղեցեաց գրանը առջեւ
ժամանակ կլինի այնպէս կլեցուին , որ անցուղարձիւ
տեղ չմնար . իւրեանց գրաստներէն ոմանք բակին մէջ ,
ոմանք արտօրէից եւ պարտիզաց մէջ կ'ցրուին , իրիկուը-
նէ սկսեալ մինչեւ առաւօտ ինքզինքնին բոլորովին գի-
նեմովութեան տալով կսկսին արբենալ . կտեսնաս որ որը
արբեցութեամբ խելքն ալ ինքզինքն ալ կորսնցուցած ,
մէկ կողմէն անառակ երգեր կերգէ ու մէկ կողմէն ալ
գինեմովութեան յատուկ եղած լրբութեամբ բարձր սոս-
կալի ձայնով միաշունջ կաղաղակէ , կգոռայ . որը քահա-
նի աղաղակներով գինին խմած ժամանակը օղին ալ հա-
սուցէք կպօռայ . որն ալ բանի մը նեղացեր է անլուր պիղծ
հայհոյութիւններ ընելով կուիւններ կյարուցանէ . որը
թմբուկ՝ որը փող , միւսը քնար կհնչեցնէ . բաց ի սոցանէ
վանօրէից բակերուն մէջ եղած ձիոց խխնջալու եւ էշերու
բազմութեան զուլու ձայներն ալ , սոյն խառնիճաղանձ
ամբօխին այլանդակ ձայնից ինչ աստիճան ներդաշնա-
կութիւն տալը գրով խօսքով բացատրելու բան չէ . որն որ
արգոյ ընթերցողաց կթողում երեւակայել : Առաւօտուն
կտեսնաս որ , բակերուն մէջ իւրեանց մօրթած ոչխարաց
փորտեաց (1) եւ գրաստուց՝ գարշելի ապականութիւն

(1) Ոչխարաց փորտիք ընելովնիս , մեր նպատակը Հայաստան
եւոյց եկեղեցւոյ մատաղ կտրելու քրիստոնէական ջերմ սէրէ
ողիէ եւ բարեպաշտութենէ յտաջ եկած ողորմածութեան պատ-
ուական սովորութեանը արգելք լինել չէ՝ քան լիցի այլ զԳե-
ուելի անկրթութեանց , անկարգութեանց որպիսութիւնքն ազգին
առջեւ ներկայացնել է . որոնք կրնան ոչխար մօրթելու յատկա-

ներովն ամէն կողմն լեցուած պժգալի Թատրոն մը բաց-
ուերէ : Առաւօտեան ժամերգութեան ժամանակն իս-
յանէ մէկ մասը կսկսին քնանալ , մէկ մասն ալ եկեղեցին
կմոնայ ամենեւին չդիտեր ուր կեցած լինելն , վասն զի
դինիին եւ օղիին ոգին իւր քնհատութեան հետ միացած
տակաւին գլխուն մէջ կծփայ . միւս մասն ալ կտեսնաս
որ , առաւօտեան մօտ քիչ մը քնանալէն ետեւ , նորէն
սկսեր են իւրեանց դիւական երգերն երգելով եւ քնար-
ներն հնչեցնելով միանգամայն ժամերգութեան ձայներն
խափանել . վանորէից վանհայրքն եւ միաբանքն այս
ամէն անկարգութեանց եւ զեղծմանց վերայ սաստիկ կեր-
պով վիրաւորուած , կերթան մեկին միւսին , կըսեն . եզ-
բայր ժամերգութեան ժամանակ է վերջացուցէք մեղքէ ,
քաղաքավարութեն դէմ է . թէ նոյն միջոցին եւ թէ որ եւ
իցէ պտեն իրենց դէմ եղած այս արգելքին հակառակ
զայրանալով մը տես ինչ կպատասխանեն . էյ՝ ինչ է այն .
մենք այս տեղը մեր դրօսանաց , մեր զեփին , մեր սեփ-
ին համար եկած ենք , դուք ինչ կխառնուիք . ա-
նոնք ալ կտեսնան որ անուամբ միայն քրիստոնեայ ,
մարդկութենէ դուրս ելած հրէշներու հետ ասկեց աւելի
խօսիլն անօգուտ է . ուստի սրտերնին մխաբերնին տակն
ու վերայ եղած այսպիսի դառն թշուառութեանց վերայ
ողբալով կձգեն կերթան : Ահաւասիկ ասոնք այսպէս ո-
մանք մինչեւ կէս օրն եւ ոմանք մինչեւ երեկոյ եւ մին-
չեւ հետեւեալ առաւօտուն , վերջապէս մինչեւ իւրեանց
ըմպելիքը լրանալու ժամանակը սոյն անկարգութիւնքն
շարունակելէն ետեւ , իւրեանց ըմպելիաց դատարկացեալ

շած տեղն մորթել , որ ամենէն փոքրիկ վանորայքն անդամ
յատկապէս տուար մորթելու տեղ ունին :

կարասիքն դրաստուց վերայ կբառնան կեղլան կերթան.

Ես չեմ կարծեր որ ազգասէր եւ բարեպաշտ անձինք, վանօրէից այս խեղճութիւնքն եւ դառն վիճակն կարգալով, եւ նոցա նախնի բարեզարդութիւնքն եւ ուխտաւորաց ջերմեռանդութիւնքն միտքերնին բերելով, փրկտէրնին չայրի չզայրանայ ու չարտասուեն :

Երանի՛ թէ միծն Ներսէս հիմա ելլար իւր գերեզմանէն, տեսնար թէ քրիստոնէութեան գարնան ժամանակներն, աստուածապաշտ եւ ջերմեռանդ ժողովրդոց աստուածային սէրն աւելի վառելու համար շինած բազմաթիւ վանքերն, այժմ ի՞նչ ողբալի վիճակի մէջ մտնեն. տեսնար թէ սրտերնին աստուածապաշտութենէ բոլորովին թուլցած եւ աստուածային սէրն եւ երկիւղն սրբտէրնէն հեռացած՝ աշխարհասէր գինեմուլ անզգամ ախտաւորաց քան թէ ուխտաւորաց, ինչպէս զբօսանաց տեղ մը դարձեր են. եւ թէ Զրիստոսի եւ սրբոց մասանց բընակարաններն, եւ այսչափ դարերէ ի վեր բազմաթիւ սուրբ հարց միանձանց քրտամբն արեամբն եւ արծառութն շաղախեալ սրբութեան վայրերն անառակ երգեր երգելու, քնարներ հնչեցնելու եւ արբեցութեան բնակարան եղեր են. որոնց այս վարմունքը աստուածապաշտ եւ ջերմեռանդ ուխտաւորաց ալ քար գայթակղութեան եղեր է : Եւ թէ որ իւր ժամանակի անկարգութեանց վերայ ողբացող Խորենացին ալ գերեզմանէն հիմա ելլար, ու իր ժամանակի վանօրէից մէջ չտեսած այս ամեն անկարգութիւնքն տեսնար, արդեօք որչափ սրտի ցաւօք եւ կսկծանօք Երեմիային նման պիտի ողբար ու արտասուէր :

Արդարեւ կտեսնամք որ, Խորենացիէն սխեալ մինչեւ

ետքի դարերուն ազգային պատմչաց եւ այլ եւ այլ մատենագրաց գրուածոց մէջ, վանօրէից մէջ այսպիսի անկարգութիւնք եւ զեղծմունք եղած լինելու յիշատակութի մը չկայ. որն որ կերեւայ թէ 40 կամ 50 տարուքնէ ի վեր է որ սկսած պիտի լինի : Ինչպէս շատ տեղերէ լսած եւ տեսած ալ եմք, որ ամէն ժամանակ թէ քաղաքաց Առաջնորդներն եւ թէ վանահայրերն, եկեղեցեաց առեաններն՝ այս անկարգութիւնքն վերջնելու համար յատկապէս բարոյական խրատներ թէ քաղցրութեամբ եւ թէ յանդիմանութեամբ խօսեր են եւ կխօսին ու դարձեալ դէմն չեն կրցեր առնել. վասն զի անգամ մը սուրբութիւն եղեր է : Ուրեմն յուսով եմք որ, որք ոչ լուան ունկամք, Նախախնամութիւնն՝ ազգային վարչութեան իշխանութեան զօրութեամբն, նոցա լսելի ընել պիտի տայ :

Հիմա քիչ մ'ալ քննեմք տեսնամք թէ այս անուամբ միայն ուխտաւոր ըսուածներուն վանքերուն տուած նիւթական վնասներն որոնք են՝ եւ հրչափ են :

Առաջին. Ինչպէս որ ըսինք առանց խղճի գրաստներն վանօրէից արտերուն եւ պարտեզներուն մէջ կը ձգեն, որոնք բուսոց վերայ կոխկռտելով ուտելով կապական են ու կոչնչացնեն :

Երկրորդ. Հայաստանի վանօրայք գրեթէ ընդհանրապէս ինքնաբոյս անտառներ չունենալով, եղածներն ալ մշակութեամբ եւ մեծ աշխատութեամբ քիչ շատ յառաջացած են, յիշեալ ուխտաւորքն իւրեանց կերակուրներն էփելու համար, փոխանակ վանահայրէն չորցած փայտեր խնդրելու, անխտիր կերպով ծառերն կը կտրտեն կիճացնեն :

Երրորդ . Վանօրէից որ եւ իցէ ատեն տուրք տուողներն բնականաբար բարեպաշտ եւ առաքինի անձինք լինելով , անոնք այսպիսի զեղծ կերպով վանքերն չեն յաճախեր . եւ յիշեալ մոլի ուխտաւորաց խումբն բազմութեան մէջ տուրք տուող անձինք խիստ քիչ անգամ կը գտնուին . բայց զարմանալին այն է որ , այս տուրք չտուողներէն են միայն որ , վանահայրներէն կպահանջեն թէ զիրենք մածունով , պանիրով , սերով եւ այլն խորտկօք կերակրէ , ապա թէ ոչ մեծ գանկատանօք իւրեանց տեղն կգառնան եւ վրէժխնդրութեամբ վանահայրերն կբամբասեն : Հարկաւ արգոյ ընթերցողք պիտի հալցեն թէ , այս ուխտաւորներն վանքերն գացած ժամանակնին մի թէ անոնց մէջէն եկեղեցեաց եւ վանահարց տուրք տուողներ չկան : Այո՛ կան , որոց մէջ հարիւրին հաղիւ տասը հոգի նուէր տուող կգտնուի . քննուած է որ , միջին հաշուով թէ շատ եւ թէ քիչ տուող եւ թէ երբեք չտուող մեկ տարուան մէջ 5000 անձերէ գոյացած 2000 ղուռուշի գումարն , ամենուրն վերայ բաժին ընելով , ամէն մեկ մարդուն 16 փարայ ինկած է . ահաւասիկ այս է սոցա արդիւնքն եւ վերոյիշեալ բոլոր վնասուց փոխարէն ըրած հատուցումնին : Եւ ասոնց մէջ հեռաւոր երկիրներէ եկողներէն զատ՝ ուրիշ օրինաւոր ուխտաւոր երբեք չկան , ըստ որում միշտ տեսնուած է որ , քաղաքաց եւ գիւղօրէից մէջի բարեպաշտ եւ աղնուաբարոյ անձինք , գիտնալով որ վանօրէից մէջ շաբաթ եւ կիրակի օրերն , այսպիսի զեղծ բարուց տէր խառնիճաղանձ բազմութեամբ լեցուած են , ուստի այն օրերն նոցա մէջ գտնուիլն իւրեանց թէ անվայել եւ մեծ անարգութիւն մը լինելն զգալով , եւ թէ միանգամայն

իւրեանց բարի գիտաւորութեանց խափանում եւ զայ-
 թակղութիւն լինելիքն գիտնալով, աւելի կընտրեն ըս-
 օրեր վանքերն երթալ, որոնք ինչպէս որ պէտք է նէ ա-
 մենայն պարկեշտութեամբ, հանդարտութեամբ եւ ջերմե-
 ունդութեամբ ուխտերնին կկատարեն. եւ վանօրէից վա-
 նահայրերէն ալ արժանաւայել կերպով մեծ ընդունելու-
 թիւն եւ պատիւ գտած, վանքին որ եւ իցէ փոքրիկ վը-
 նաս մը անգամ տալէն զգուշանալով, շուտով իւրեանց
 տեղն կվերադառնան: Միշտ տեսնուած է որ, վանքերն
 ուխտի գացող այսպիսի օրինաւոր եւ բարեպաշտ ան-
 ձինք, հազիւ ամիսը հինգ կամ տասը հոգի կպատահին:

Թէ քաղաքաց եւ գիւղօրէից բարեբախտ ազգայնոց
 բազմութեան բերնէն, եւ թէ հեռաւոր երկիրներէ վան-
 քերն գացող ուխտաւորներէն լսած եմք. որոնք ընդհան-
 ռապէս օրինաւոր եւ բարեպաշտ անձինք են, կըսեն:
 Թէ ինչո՞ւ համար այսպիսի զբօսասէր անձինք՝ իւրեանց
 պարտեզներն, այգիներն, լեռներն եւ դաշտերն թողելով
 զբօսանաց համար վանքերն կյաճախեն. այս ինչ յանդգ-
 նութիւն, ինչ զեղխութիւն է, քրիստոնէի մը այսպիսի
 անկարգութիւն կվայելէ. որոնք այսպիսի եւ ասոնց նը-
 ման խօսքերով միշտ կգանկատին ու կցաւին: Յայտնի է
 որ եթէ վարչութիւնն այս զեղծմունքներն արմատախիլ
 ընէ, արդարեւ ամէն կողմէն հազարաւոր եւ բիւրաւոր
 անձերէ մեծ շնորհակալութիւններ եւ գոհութիւններ
 պիտի լսուին. որոնց ամէնքն ալ վանօրէից ըստ ամե-
 նային բարեկարգութեան եւ յառաջադիմութեան ցանկա-
 ցող անձինք են: Թէ եւ մենք մէկ կողմանէ ուրախ եմք,
 որ այնպիսի մոլի անձերն, քաղաքաց եւ գիւղօրէից մե-
 ջի բարեպաշտ ազգայնոց բազմութեան հետ բաղդատե-

լով, բարեբաղդաբար շատ սակաւաթիւ են. բայց վանօ-
րէից բարեկարգութեանց արգելք լինելու մասին խիստ
վնասակար բազմութիւն մը կկազմեն :

Մինչեւ ցայժմ այս մեր ըրած նկարագրութենէն յայտ-
նի եղաւ թէ, ինչպէս որ ըսինք եթէ վանքերն գինի եւ օ-
ղի տանելն բոլորովին արգելուի, այն ժամանակը միայն
ամիսը հազիւ հինգ կամ տասը հոգի օրինաւոր ու խտա-
ւոր վանքերն կերթան, ու հետեւաբար այն տեղերն
խաժամուժ ամբոխներէն ազատ առանձնութեան եւ հան-
գարտութեան մէջ կմնան. այն ատենը՝ նոյն տեղերն
կազմուելիք հաստատութիւններն ալ ըստ ամենայնի իւր-
եանց կարիւրս պարտ ու պատշաճ եղած ազգին նպատա-
կին համեմատ բարեկարգութեանց մէջ օրէ օր կզարդա-
նան : Ապա թէ ոչ՝ ո՞վ չգիտեր որ խուռն բազմութիւն
մը հրոսակ մը, միշտ դպրոցներուն դուռներէն ներս խու-
ժելով, իւրեանց ելուժուտներովն ուսանողաց եւ ուսուց-
չաց ուսմանց, ընթերցութեանց եւ դասերուն արգելք պիտի
լինին նոցա թանկագին ժամանակներն կորսնցնելով : Բայ
ի սմանէ ո՞վ չգիտեր որ, այն ատենը թէ գաստտուք եւ
թէ աշակերտք նոցա բազմութենէն բոլորովին շփոթե-
լով, միշտ արթուն պիտի կենան, որ չլինի թէ մէկը
թանդարանին՝ միւսը դպրոցին մէջի եղած կահ կարաս-
եաց բարեկարգութիւններն խանգարէ վնասներ տուց. եւ
միւսը գիրք մը գողնայ. եւ ուրիշ մը գրասեղանաց վը-
րայի եղած պիտանի թղթոց եւ դասատետրաց վնաս
գրիչն ձեռքն առած դժգոհ կամ թէ այն տեղէն անհետ
ընէ : Ո՞վ չգիտեր որ անշուշտ հանդիսատեսներու հրո-
սակ մ'ալ տպարաններէն ներս մտնելով, մեծ աշխատու-
թեամբ երկար ժամանակներով կարդի դուռած թէ տըպ-

ուելիք շարուած գրերուն երեսներն, եւ թէ ձուլիալ
գրերուն իւրաքանչիւրն իւրեանց յատկացած տեղերէն
վերցնելով, պիտի խառնեն ու տակն ու վրայ ընեն : Աս-
կէց զատ ո՞վ չգիտեր որ քանի մը անձինք ալ պէտք է
հսկեն, որ չլինի թէ գրերէն եւ գործիքներէն մէկ քանին
անբեւոյթ ընեն . եւ այս ամէն կերպով վանահարց եւ
տպադրապետաց մեծամեծ վնասներ տաժանելի եւ տա-
րապարտ աշխատութիւններ հւամանակի կորուստներ
պատճառեն : Ո՞վ չգիտեր որ հիւանդանոցաց մէջ, այս
խաժամութ ամբոխին թէ այլանդակ ձայներն եւ աղա-
ղակներն, եւ թէ նոցա ներկայութիւնն հիւանդաց ինչ
անտանելի նեղութիւններ պիտի պատճառէ . որոնք ընդ-
հանրապէս բնականաբար միշտ լռութիւն եւ առանձնու-
թիւն կախահանջեն : ուսկից յառաջ եկած վնասներն բը-
ժըջկաց կ'ընդունէք բացատրել : Նաեւ ո՞վ չգիտեր որ այն-
պիսի գինեմով անողայ անձանց այս զեղծ վարմունքներն
անկարգութիւնքն անլուր պիտի հայհոյութիւններն եւ
երգերն, դատարարակեղոց բնաւորութեան վերայ ինչ
վատ տպաւորութիւններ չպիտի ընեն :

Պէտք է սա ալ իմացնեմք որ, ինչպէս որ վերն ըսինք՝
արդարեւ մարդ չկայ որ Համոզութիւն, եւ թէ ուխտաւո-
րաց վանքերն օղի գինի տանելն բոլորովին արգելուի,
անտարակոյս այն ատենը վանքերն պէտք եղած բա-
րեկարգութեան մէջ կ'մնան . սակայն ինչպէս արդել-
ուած կրնայ սեպուիլ, երբոր եւ թէ ոչ յայտնի, բայց ծա-
ծուկ կերպով ուտելեաց ծրարներուն մէջ պահելով վան-
քին բերեն խմեն, միթէ ասով նոցա խառնիճադանձ-
ողորական եղած բազմութենէն մէկ անձ մը անդամ կը
պակսի՞ եւ ոչ երբէք : Ասկէց զատ ժամանակէ մը ետեւ

հետզհետէ ծածուկը կլինի յայտնի, հետեւաբար դարձեալ առաջին անկարգութիւնն ըստ ամենայնի կսկսուի շարունակուիլ : Ուրեմն յայտնի է որ բանն այն ծածուկ կերպով բերելն ալ արդիւնէլու գործադրութիւնն է, որ անկարգութիւնն արմատէն վերնայ :

Նաեւս ոգելից ըմպելիքն եւ բոլոր անկարգութիւնքն վարչութեան կողմէն արդիւնեւէն ետեւ, կրնայ լինել որ դարձեալ նոյն ուխտաւորքն վանօրէից եթէ ոչ պարսպաներէն ներս, այլեւ անոնցմէ դուրս նոցա կողմերն եւ քովերն եղած պարտիզաց, արտօրէից մէջ առաջին անկարգութիւնքն շարունակեն : որոնք դարձեալ վանօրէից մէջ լինելէն ինչ տարբերութիւն ունեցած կլինին. եւ բուսոց ալ մի եւ նոյն առաջին վիսաներն կուտան, ըսելով թէ ազգը վանօրէից մէջ օղի գինի խմելն արգելած է, նոցա դուռնէն դուրս մեզի ո՞վ կրնայ խառնուիլ : եւ ահա այս կերպով հետեւաբար կրկին նոյն խառնիճադան ճից բազմութիւնն վանքերուն մէջ կյաճախեն, ինչպէս որ ըսինք սա տարբերութեամբ միայն, որ իւրեանց անկարգութիւնն պարսպաներէն դուրս կշարունակեն եւ ոչ թէ ներսը : միթէ այս կերպով ալ վանքերն առաջին խղճալի վիճակէն ազատած կլինին, քաւ լիցի :

Ուրեմն ինչ կերպով կրնայ բոլորովին արդիւնուիլ օղին եւ գինին եւ այս ամէն անկարգութիւններն, որոնք աղգին եւ քրիստոնէութեան ալ նախատինք եւ մեծ անարդանք կբերեն :

Ահաւասիկ ասոր վրայօք մեր ըրած խորհրդածութիւն սա հետեւեալն է, որն որ աղգին եւ Վիդրոնական վարչութեան կներկայացնեմք ի բարեկարգութիւ պանծալի հաստատութեց եւ ի յառաջադիմութիւն ազգին : Այսինքն,

Ա Ռ Ա Ջ Ի Ն

Թէ քաղաքաց մօտ եւ Թէ հեռու եղող վանօրէից վա-
նահայրներն , երբոր կամ վանքերուն պարիսպներէն
ներս եւ կամ դուրսը , անոնց պարտիզաց , արտօրէից կող-
մերն եւ վերջապէս նոցա սահմանաց մէջ , Թէ ծածուկ եւ
Թէ յայտնի գինի , օղի բերող՝ նաեւս վերոյիշեալ ան-
կարգութիւններէն եւ զեղծութիւններէն մէկն ի գործ դնող
ուխտաւոր մը տեսնան , պէտք է ամենայն անաչառու-
թեամբ այն անձին բնական տեղն , անուէն , մականունն ,
արհեստն եւ ըրած անկարգութիւնն ծանուցանելով շու-
տով գիր մը գրեն Գաւառական վարչութեան . եւ վար-
չութիւնն ալ զայն անմիջապէս կանչելով , իբրեւ ազգա-
յին կանոնաց յառաջագիմութեան եւ քարեկարգութեան
հսկառակ խանգարիչ ազգամիաս անձ , պէտք է ընտրող
եւ ընտրելի լինելու իրաւունքէն զրկէ , եւ միանգամայն
նորա անունն , մականունն , արհեստն եւ բնակութիւնն
արձանագրէ եւ Թաղական խորհուրդին ալ արձանագրել
տայ . եւ Թէ որ մի եւ նոյն անձը ասով ալ չզգաստանա-
լով երկրորդ անգամ ալ որ եւ իցէ վանքի մը վանա-
հայրէն ամբաստանուի , պէտք է Գաւառական վարչու-
թեան Ժողովներուն մէկուն կողմէն դատապարտուի . եւ
Թէոր ամբաստանեալն Սահմանադրութեան 67 յօդուա-
ծին Ա . Բ . Գ . հատուածոց համեմատ ընտրելու իրա-
ւունքէն դատաստանապէս զրկեալ եղած լինի , յայտնի է
որ այնպիսին առաջին անգամուն անմիջապէս դատապար-
տել արժան է . եւ Թէ որ ամբաստանեալն խեղադար լի-
նի , որոնց մէջ ամենէն աւելի վանօրէից նիւթական վը-

նասնեւ հասցնողներ ալ կգտնուին , անոնք ալ այնպիսեաց համար յատկացած զգաստարանն պէտք է խրկուին , կամ թէ ուրիշ ուր եւ իցէ կերպով եւ հնարքով մը զանոնք վանքերն երթալէն պէտք է արգիլել : Եւ թէ որ ամբաստանեալն քսանըհինգ տարեկանէն վար լինի , որքն որ ըստ Սահմանադրութեան՝ ընտրողաց կարգէն չէ , պէտք է նորա անունն արձանագրել , եւ միանգամայն իւրեան հայրն եթէ կենդանի է , ապա թէ ոչ մեծ եղբայրն կամ ուրիշ պարագայքն կանչել եւ պատուիրել , որ զայն խրատէ . իմացնելով որ՝ եթէ երկրորդ անգամ ալ ամբաստանուի , անմիջապէս առանց ակնառութեան պիտի դատապարտուի : Նաեւ սովորութիւն մ'ալ կայ որ , ոմանք վանօրէից ոմանց ոչ թէ սահմանին մէջ , այլ եւ անկէջ դուրս անոր մօտ կամ հեռու եղած կողմերուն լեռանց եւ դաշտաց մէջ իւրեանց մոլութեանը դերի լինելով արբենալէն ետեւ , ոչ թէ ժամանակին կանուխ իւրեանց տեղն կգառնան կամ թէ նոյն վանօրէից կողմերն գիւղերուն մէջ կօթեանին , որ ամէն տեղ անպակաս է , այլ վերոյիշեալ ամենայն անկարգութեամբք ուղղակի այն կողմի եղած վանքն կերթան : Անհաւարք այսպիսեաց համար ալ պէտք է ծանուցանեն Գաւառական վարչուն , որ վերոգրեալ կանոնին համեմատ դատապարտուին :

Ե Ր Վ Ր Ո Ր Դ

Որ եւ իցէ մէկը վանքերուն մէջի եղած ընծայարաններն տպարաններն եւ հիւանդանոցներն , ազգասիրաբար այցելութիւն ընել ուզէ , ինչ կերպով պէտք է երթալ :

Ամէնէն առաջ Վեդրոնական վարչութեան կողմէն

ընդհանուր վանօրէից համար տոմսակներ տպել տալէն ետեւ, իւրաքանչիւրն վարչութեան կնքով կնքելով, պէտք է թէ քաղաքաց եւ թէ գիւղօրէից թաղական խորհրդոց իւրաքանչիւր վանօրէից պատշաճ դատուածին համեմատ թուով ցրուել: Անկէց ետեւ հոլ որ ազգասիրաբար վիրտյիշեալ հաստատութիւններն այցելու թիւն ընել ուզէ, պէտք է ամէնէն առաջ իւր թաղին թաղական խորհուրդէն տոմսակ մը առնէ եւ միանգամայն նորա համար յատկացեալ տուրքն ալ վճարէ. եթէ ճշմարիտ ազգասէր է, անտարակոյս ամենայն սիրով եւ յօժար կամօք կվճարէ, եւ ո՞ր վանքն որ պիտի երթայ, նոյն տոմսակն պէտք է նոյն վանքին վանահօրը յանձնէ:

(1) Իւնչս այցելուններն իւրեանց անուէն եւ թաղն, այն տեղերն եղած իւրեանց համար յատկացեալ տետրակին մէջ պէտք է ստորագրեն: Վանքերուն միաբաններէն եկեղեցականներէն եւ վանօրէից խորհուրդներէն զատ, ով որ այս տոմսակն վանահօր չյանձնէ, նոյն հաստատութեանց դուռնէն ներս մտնելու իրաւունք չունի, Ղաեա գաւառական վարչութեանց իւրաքանչիւրն, պէտք է իւրեանց վիճակին մէջ գտնուած սոյն հաստատութիւններէն որ եւ իցէ մէկն ունեցող վանքերուն վանահարց ալ, սոյն տոմսակներէն պատշաճ համարուած թուովն ցրուեն, եւ միանգամայն ալ ամէն մէկ տոմսակին վերայ

(1) Յայտնի է որ վանահայր մը տոմսակը ո՞ր թաղական խորհուրդին կողմէն ստանայ նէ, տոմսակին ստակը անկէց պիտի պահանջէ. որն որ նոյն տեղի հաստատութեանց կվերաբերի. եւ միանգամայն վանօրէից խորհրդոյն միջոցաւ սոյն ստակն առնելն ետեւ, գարձեալ տոմսակն պէտք է իւր առաջին տեղն վերադարձնէ:

նոյն վարչութեան կնքովն պէտք է կնքուին , որ ասով
 թաղական խորհրդոց քովի եղած տոմսակներէն ունեցած
 տարբերութիւննին իմացուելով նոցա հետ չչփոխին :
 Սոյն տոմսակներն ալ՝ հեռաւոր երկիրներէ կամ ուրիշ
 գաւառէ միւս գաւառաց վանքերուն հաստատութեանց
 այցելութեան գացողներուն պէտք է տրուին վանահօր
 կողմէն . ասոնք ալ իւրեանց անունը նոյն տոմսակաց վե-
 րայ գրելէն զատ , վերոյիշեալ տետրակին մէջ ալ պէտք է
 ստորագրեն . եւ նոյն տոմսակներն դարձեալ վանահօր
 քովը պէտք է մնան :

Վերոգրեալ ԱՌԱՋԻՆ Եւ ԵՐԵՐՈՐԴ կանոններն ,
 յեղորոշական վարչութեան կողմէն յատկապէս տպագրու-
 թեամբ հրատարակուելով Գաւառական վարչութեանց
 խրկուելէն ետեւ , պէտք է անոնք ալ թէ քաղաքաց եւ
 թէ գիւղերուն եկեղեցեաց մէջ հրապարակաւ կարդացը-
 նել եւ բացատրել տան . բաց ի սմանէ , միանգամայն նոյն
 միջոցին Սահմանադրութեան 66 յօդուածին համեմատ՝
 ընտրութեան իրաւունք ունեցող անձանց ալ իւրեանց
 անունը ստորագրել տալու են : Եւ այս տպեալ կանոններն
 պէտք է ամէն տեղ վաճառուին : Եւ ահաւասիկ այս ա-
 մէն կերպերով կանոններն հռչակուելէն եւ ամէնքն ալ
 հասկնալէն ետեւ , կանոնաց հակառակ վարուող եւ ոչ
 մէկն , անկէց ետեւ խաբէութեամբ ես չէի գիտեր ըսելով
 ինքզինքը արդարացնելու տեղի եւ իրաւունք չկրնար
 ունենալ :

Հարկ չէ ըսել որ , այս կանոններն այն ամէն զեղծ-
 մանց մոլութեան սովորութեամբն հիւանդացեալ անձանց
 ազդու դեղ մը եղած պիտի լինի , որ բարին եւ օգտակարն
 կամայ ակամայ իւրեանց սովորութիւն լինելէն ետեւ ,

այն ատենք իւրեանք ալ բարեբարոյ անձանց հետ ի միա-
սին, սոյն բարեկարգութեանց գործադրութեանը համար
ազդային Վարչութեանէն գոհ եւ շնորհակալ պիտի լի-
նին ամենայն ուրախութեամբ:

Յ. Ս. Կ. Գալիագճեան

Սիւստէն Ս. Լրծուոյն :

ՏԱՆԱՀԱՓՈՒԹԻՒՆ ԳԵՐԱՊԱՏԻ ԹՕՓՈՒԶԵԱՆ ՅԱՌՈՒ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՆԱՀՕՐ ԼԻՄ ԱՆԱՊԱՏԱՅ

Հաղափախան ստորագրութիւն ի վիճակ մարդկային վեհաց իւ-
րաքանչիւր հասակի՝ ի ծննդէն անտի մինչ ի խորին ծերու-
թիւն ի զաւամբութիւնն :

ԱՌ ԵՐԱՆԱՅՆ

Երախայն երկ՝ ան նորածին, երախայն երկնէ-
ջերեր աշխար՝ աշխարային, երկնայնայնա-
բերի յաւանդ խիստ լալագին, երկնէ յաշխար-
վայ վայ ձայնէլ՝ ըստ սքանչելի անհիւստան
Զի մերթ մուչէ եւ մերթ ճըչէ, մենկջող տանայ
Ընթան անբառ՝ միայն վայէ,
Տիւ եւ գիշեր աղաղակէ,
Անկայ անկայ՝ իբր յադիւնէ
Զի յարգանդէ՝ յանարգ երկրի, Անարգ անխա-
Յար անարգել կըբեկողն, Իբեկ անարգել
Ըզխոյ վըշոյ եւ տապաակի, Իտան անարգել
Ըստ անխիճցն՝ առ հայր նախնի :

Ստիպեալ ի քաղց՝ բանայ զբերան ,	Բերան . Բերան .
Մնայ կաթին՝ բերիլ ընդ այն .	Ընդ այն .
Դիել զստին՝ սնանիլ ի տին ,	Ստին . սնանիլ .
Աճումն առնուլ ցաւակրական :	Գին .

ԱՌ ՏՂԱՅՆ

Տըղայն տեղայ իբր ըզտարաւի ,
 Իտան տխուր սրտից փարատ .
 Տենչիկ , տարփիկ զգուեալ ընդ աւի ,
 Փայլ փայփայեալ՝ որպէս լուսարաւի :
 Զոր միշտ կըլծել ծնողաց պարտի ,
 Տեղալ ի աղայն զխրատ բանի .
 Աճական սուրբ երկիւղի ,
 Որ ինչ առ նա վերաբերի :
 Զի նոր բողբոջ տնկեալ ի բոյս ,
 Արբամբ շնորհաց գտցի աճոյս .
 Սաղարթանալ ծաղկափթիթս ,
 Բերել վարուք ըզմբ պըտուղս :
 Որ ինչ սերմունք արկցին ի սիրտս ,
 Ի մուտս կաթեն ի ներ ոգիս .
 Արմատ կարթեն չար կամ բարիս ,
 Նոյնանըման տան արմըտիս :

ԱՌ ՄԱՆՈՒԿ ՀԱՍԱԿՆ

Մանուկ ման գայ՝ անխել մոլոր ,	Մոլոր . արժապ .
Ոլոր շրջիլ աստ անդ գըլոր .	Ըր , որ է - գլոր ,
Թէ առ աշխարհս հայի խոլոր ,	Խոլոր , Բոլոր :

Ժառանգ գտցի երկնից բոլոր :
 Թէ մանեոցի մանուկըն այն ,
 Ի սէր հեշտի մուկգնական .
 Բերիլ ի վարս անառական ,
 Վայ է հոգւոյն ի յաւիտեան :
 Եթէ անման՝ յորումանէ ,
 Ի չարախրատ ընկերակցէ ,
 Մեկուսացեալ՝ զերծ մընասցէ ,
 Պերճ յանըման համբաւ ելցէ :
 Եւ մանկիկ , լեր հրեշտակաց ,
 Որ ես պատկեր , անմահ կենաց .
 Եւ նմանութիւն ստեղծ չին վառաց ,
 Արժանանալ լոյս խորանաց :

Ըսենոյ , հան գայ
 հանիլ , լորիլ , հո-
 լեգնիլ , անհան :

ԱՌ ՊԱՏԱՆԻ ՀԱՍԱԿՆ

Պատանի պարզ , պատ առեալ յամս ,
 Պար ունիցիս պատկառ յերամս .
 Պատուասիրել ըզբարի վարս ,
 Վերապատուիլ ի կենան անմահս :
 Պարապիլ միշտ սրբոց գըրոց ,
 Ունկըն դնել հարց խըրատուց .
 Հետամըտիլ նոցին վարուց ,
 Եւ պարակցիլ ընտրեալ դասուց :
 Լիւր ըզխըրատս սուրբս եւ բարիս ,
 Եւ խոր ատեա դու ըզբարիս .
 Եւ մի ատեր խոր զխրատիչս ,
 Որպէս ըզբեզ թշնամանիչս :
 Յերկիւղ առ Տէր յամօթ առ մարդ ,

Պարանի համ պա-
 րանեալ , պար առ-
 եալ . համ պար-
 անեալ եւ այլն :

Խրապ . խոր ա-
 րեւ :

Չարին լեր միշտ դու գիմամարտ .
 Չի մի անկցիս փոյթ յորողայթ .
 Յանգերծ կապանս լինիլ պատանդ .
 Գըրոց սըբոց աշակերտ լեր , Աշակերտ .
 Չի արշ կերտցիս լոյս գեր ի վեր . Կերտիլ .
 Մի մնար յիմար իբր ոմն ստուեր , Ստուեր .
 Անբան մըռօք՝ զերթ սուտ երեւ . Երեւ .
 Ի մաստուածիւնն տայ իմանալ ,
 Չնծային ըզկամս օրհնեալ , Օրհնել .
 Չօր անդ հիմնել՝ զաստ հնացեալ , Գնել .
 Գործովք բարեացն՝ թագաւորեալ .
 Ի մաստուածիւնն տայ քեզ հանճար , Հանճար .
 Այրի հոգւոյդ հանել ըզճար . Դար .
 Պարտուց մեղացդ լինիլ վըճար ,
 Փառս պատրաստել յերկինս անճառ .
 Չի որ շընորհք լոյս գիտութեան ,
 Ի նք շոգւոյն՝ պարգեւ մարդկան ,
 Խնդրի տեղի յոյժ մաքրութեան ,
 Հեզ եւ խոնարհ սիրտ սըբութեան .
 Ապա ջանս կըթել ըզքեզ ,
 Մընալ մաքուր խոնարհ եւ հեզ ,
 Եւ միշտ դողալ ի բանից Տեառն ,
 Որ գայ հանգչիլ յոգիդ ի քեզ .

ԱՌ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՍԱԿՆ

Երիտասարդ՝ զօրեղ պայծառ , Երիտասարդ .
 Երիւր տասանց՝ արդ զամս առեալ , Եւ քան արդ .
 Արբուն կենաց՝ յայր բուն հասեալ , Արբուն .

Ի հասակացն զմիջին վարեալ :
 Խռանդն սրտիդ արգի յո՞ր կողմն ,
 Ի Ձախ Ի Թիւրն Թէ յաջակողմն .
 Տեղի տուեալ իցես բարւոյն ,
 Եթէ առ չարն վատթարագոյն :
 Վատ եւ Թիւրն Ի դայթ անկման ,
 Յեղաշրջեն յանկանգնական .
 Վայրաբերիլ յանգէրծ զնդան ,
 Հանել հապա յահեղ ատեան :
 Նաեւ շնորհաց մըտեալ Ի կիրթ ,
 Առ ոտս գիտնոց բերիլ Ի կերտ .
 Լոյս իմաստից ծագիլ Ի սիրտդ ,
 Առ հոգեւորն վառեալ Ի միտ :
 Արբեալ իցես եւ յաղբերէ ,
 Զմատուակեալն՝ Ի Բրիտոսէ :
 Ըզբաժակն զայն՝ զոր ինքն արբեալ ,
 Զայն սիրելոյդ՝ իսկ աւանդէ :
 Ապա Թէ ոչ՝ ես սանձարձակ ,
 Աշխոյժ բնութեամբդ՝ միշտ համարձակ .
 Հեշտից մարմնոյդ՝ իսկ հետեւակ ,
 Ահա հոգւոյդ բերեր վըտանդ :
 Մի՛ , աղաչեմ , ըզնր շողին
 Հիշուցաներ՝ ըստ Վօղոսին .
 Այլ մանաւանդ ըզմուխ չարին ,
 Զի մի մխեսցիս Ի բոց հնոցին :
 Սանձ կալ զերկիւղն՝ որ յԱստուծոյ ,
 Եւ քող զամօթն՝ առ Ի մարդոյ .
 Ուղիղ վարիլ Ի կեանս քոյ ,
 Վերարժանալ պսակին լուսոյ ,

Որ ես յերկրի՝ զվերինն խորհեա,
 ԲՂ սիրտդ եւ զմիտդ անդ ժողովեա .
 Ուր ընդ առաջ Հօրն Քս կայ,
 Քրում վերելման սպասեալ մնայ :

ԱՌ ԱՅՐ ԼԻ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՍԱԿՆ

Այր լի աւուրբք, արի ի կեանս,
 Արիական ի բնաւ յուզմանս .
 Ի փորձ մըտեալ զկողաճականս,
 Հիմնեալ ի կիրթս խոհեմականս :
 Զի փորձ եւ վիշտք երկար ամաց .
 Բերեն զխմաստս հանճար մտաց,
 Տնտես գըտեալ իւրականաց,
 Վարիլ կարգաւ ըստ պահանջմանց :
 Այլ ըստ հոգւոյ յարանըման,
 Թէ վարեսցիս եռանդական .
 Սուտ համարել զաստի ըզկեան,
 Զանանց խնդրել զանմահական :
 Ահա դու ես ճիշտ այր բարի,
 Եւ կատարեալ առաքինի .
 Արքայութեանն ժառանգ որդի,
 Կատարելովդ զկամս Յսր :
 Իսկ Թէ ընչեղ եւ մեծառուն,
 Լցեալ իցես առատագոյն .
 Լի ամենայն բարեօք քո տուն,
 Առատաճեռն լեր գլխագոյն :
 Զի զոր ունիս բնաւին չէ քոյ,
 Այլ պարգեւեալ քեզ յԱստուծոյ .
 Տնտես կարգեալ ի տան իւրոյ,

Այր տի :

Սպասահարկել միշտ քաղցելոյ :
Զի որ աղքատք առ դուրսդ կան ,
Գրեալ պարտիս ողորմական .
Չորս վայելես ի քում սեղան ,
Նոյն խղճալեացն միշտ բաժին հան :

Վասն կամաւոր այն աղքատին ,
Որ վասն քո կայ ի խաչին .
Տարածս ունիլ ձեռս ի փայտին ,
Խրկառել քեզ զհացն երկնային :

Զի որ զօտարսըն մեծարէ ,
Եւ ըզ քաղցեալսըն կերակրէ .
Եւ ըզմերկեալսն զգեցուցանէ ,
Տեառն Զնի վերաբերէ :

Այլ թէ անկոյթ՝ ըստ առակին ,
Այն մեծատան անողորմին .
Զգենուս բեհեզս եւ զծիրանին ,
Բազմիլ ի զեղխս ի սեղանին :

Ի փշրանաց գոնէ՛ անտի ,
Ո՛չ կարեկցիս տալ աղքատի .
Վայ եւ ահա յայսմ գիշերի ,
Հոգիդ ի քէն բաց պահանջի :

Թաղիլ ի դժոխս անդնդական ,
Ուստի բանաս ըզբիւրդ ական .
Գոչես վայել առ Աբրահամ ,
Խնդրել զ՛՛ լազար քեզ ապաստան :

Այլ չէ՛ հընար ծագիւ մատին ,
Զով քեզ դիմել քում պապակին .
Զի վիհ մեծ է անհընարին ,
Ընդ տարտարոսն եւ ընդ երկին :

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ԲԱՆԵՇ (1)

Բաղէշ քաղաքը իւր տեղւոյն յարմարութեանը համար այսինքն , վանայ , Կարնոյ , Տիգրանակերտի , Սեղւորտու , Բերիայի եւ այլն քաղաքաց , ոմանց մօտ եւ ոմանց թէեւ հռի , բայց ճամբու վերայ լինելուն համար , սկիզբէն ի վեր մինչեւ ցայսօր նոցա հետ միջառեւորական յարաբերութիւններ ունեցեր է եւ ունի . ասոր համար է որ Թովմայ Արծրունին այս քաղաքը Շահաստան կանուանէ ըսելով թէ , « եւ կէսքն հաստանին մինչ ի Շահաստանն Բաղէշ » Բ . 6 : « Տեղւոյն վաճառական ազգայինքն՝ սոյն քաղաքաց հետ յաճախ յարաբերութիւն ունենալնուն համար , վանեցողց չափ Կ . Պօլիսէն վաճառք բերելու չեն կարօտիր . ուսկից երբեմն ոմանք միայն մալիֆաթոռայի վերաբերեալ վաճառքներ կրերեն (2) :

(1) Տես թիւ 1 . Երես 20 :

(2) Երանի թէ յանեցի ազգային վաճառականք ալ . որոց մէջ արդէն ընկերութեան ոգին մտած է , ընկերութիւններ կազմելով , վերոյիշեալ քաղաքաց հետ առեւտրական յարաբերութիւններ ունենալու հետեւութիւն ընէին . որոնք անտարափոյ հեմալուանէն բազմապատիկ աւելի մեծ օգուտներ պիտի բոլէին . եւ այս քաղաքներն Կ . Պօլիսէն շատ աւելի իւրեանց երկրն մօտ լինելուն համար , երթեւեկութեան մասին ալ լաւեանց չեն դիւրութիւն պիտի լինէր :


Արուեստաւորաց բոլորն ալ մեր ազգայիններէն են . որք են ոսկերիչ , դերձակ , երկաթագործ , կոշկալար , խաղաղորդ , (թապաղ) եւ քանի մը չիթճի ու ներկարար եւ այլն : Նաեւս բազմաթիւ կտաւագործք կան , որոց գործածներուն մէջ այնպիսի ազնիւներն կան , որ ըստ ամենայնի Ամերիկայի կտաւին կհաւասարին :

Բերքերն են . գղթոր , խէժ , ծխախոտ , լոշտակ , չամիչ , խաղող , գինի , որուն խանտրտիկ կըսուի . օղի , ըռուպ , նուռ , թուօ , թուզ , խնձոր , տանձ , սեխ , ձմերուկ եւ ուրիշ զանազան տեսակ պտուղներ : Նաեւս շատ խաւրժիլ կայ , որուն գովացուցիչ հիւթն ջուրին հետ խառնելով կխմեն , ասոր դառն արմատն ալ լինի ըսուած դեղն է . բայց ժողովուրդ հետեւութիւն ընող չկայ . այս բոյսն լեռներուն վերայ դարնան ժամանակն ինքնիրեն կըռնանի : (Ասկէջ Վանայ կողմերն ալ շատ կայ , մանաւանդ Վարագայ լեռանց վերայ , ուր տեղի բուսածն իւր ընտիր ցատկուէր համար համբաւաւոր է :) Տեսակ տեսակ գոյնզգոյն քաղցրահոտ ինքնաբոյս ծաղիկներ ալ կան . որոց մէջ երեւելի է նարկիզ ըսուածն եւ մանուշակն : Առատ է ընտիր մեղր ալ ունի : Թռչուններէն ունի կաքաւ , լոր , մաշկաթեւ , սոխակ , սարեակ եւ այլն : Չորքոտանիներէն ունի այծեամն , աղուէս , սպիտակ արջ , վայրի ոչխար , վարաղ , եղն . նաեւս վնասակար օձեր ալ կըտեսնին :

Թէ վայրենի եւ թէ պտղատու ընկուզի , կաղինի , տանձի եւ այլն ծառոց շատ անտառներ ունի : Բարձր անմատոյց լեռանց վերայ տեղ տեղ ընկուզի ծառեր կան , որոնք աղուաներն տնկած են , ուր տեղերն ելլալն անհնարին է . ըստ որում ասոնք ընկոյզը շատ կսիրեն , ան-

յազուածեամբ ուտելէն ետեւ, միանգամայն ազահուծի
ուրիշ ատենի համար ալ պահել ուզելով, բերաննին
կառնեն կտանին այն բարձր լերանց վերայ հողին տակը
կթաղեն. ինչպէս որ կըսեն երկինքին ամպերն ալ նշան
կընեն որ ուզած ատենին դիւրութեամբ գտնան. եւ ու
րովհետեւ այնպիսի զարմանալի հանճարամտութեամբ
դրած շարժական նշանով զայն գտնալու կարող չլինելնուն
համար, հետեւաբար ժամանակ անցնելով ահագին ծառ
մը կլինի: Բայց ինչ օգուտ որ ինչպէս որ ըսինք, այն
պիսի բարձր տեղեր թաղած են որ, մարդիկ չեն կրնար
երթալ պտուղն փրցունել. որով գոնէ իւրեանց տնկած
ծառերուն վերայէն ժամանակաւ գողցուած բնկուղնե
րուն փոխարէնն տոկոսով հանդերձ ձեռք անցունեն.
ուստի դարձեալ եթէ ոչ զանի տնկող ագուան՝ գոնէ նո
րա ձագերն թողնելն եւ ազգականներն յորդուց յորդի
յաջորդաբար կլայելեն:

Կլարուակիւն:



ՋԱՐՄԱՆԱԼԻ ՆՈՐ ԳԻՒՏ ՄԸ

Ս ինչեւ ցայժմ դաստիարակք, դասատուք եւ բանի
բուն ազգասէր անձինք, կմտածէին թէ արդեօք ինչ կերպ
ինչ ոճ եւ գիւտ կրնան գտնալ, որ աշակերտք ուսմուն
քը իբրեւ զբօսանք սորվին, որով թէ քիչ միջոցին մէջ
շատ բան սորվելով իւրեանց թանկագին ժամանակներն
պարապ տեղը չլատնուին, եւ թէ սիրով եւ խիստ դիւ
րին կերպով սորուելով, հետեւաբար սորվածնին իւրեանց
մտացը խորերն անջնջելի կերպով տպաւորուին: Արդա

րեւ մինչեւ ցարդ շատերն այս բանին համար շատ կեր-
 պեր եւ ոճեր ի գործ դրած են, որոնք թէեւ քիչ շատ
 օգուտ ըրած են, բայց թող ներուի մեզի ըսելու որ նո-
 ցա մէջ եւ ոչ մէկը այս նոր ոճին համեմատ գոհացուցիչ
 արդիւնք մը չէ ունեցած. սակայն այսպէս լինելն զար-
 մանք չէ, ըստ որում ինչպէս որ ամէն գիւտ ի սկզբան
 միշտ թերութիւն կունենան ու հետզհետե կկատարելագործ-
 ուին, ասոր պէս ալ, ազգին յառաջադիմութեան խիստ
 կարեւոր եղած այս գիւտն այժմ կատարելագործուե-
 յաւ. որուն արդիւնքն եւ օրինակն տեսնալէն ետեւ,
 հետեւեալին մէջ նկարագրելով ընդհանուր ազգին առ-
 լին պիտի ներկայացնեմք. եւ որուն վերայ մեր արդոյ
 ընթերցողաց եւ բոլոր գիտնական ազգասէր անձանց ու-
 չադրութիւնն կհրաւիրեմք: Գիւտ մը՝ որ եթէ երկրիս
 վերայ որչափ որ ազգային վարժարաններ ունիմք նոցա
 ամենուն մէջ ալ գործադրուի, անտարակոյս պէտք է լի-
 նիմք որ, աւելի չափազանց չխօսելով, աշակերտք մէկ
 տարուան մէջ հինգ տարուան յառաջադիմութիւն պիտի
 ստանան, եւ որոնք միանգամայն ուսմունքն ոչ թէ այժ-
 ման դպրատանց մէջ եղածներուն պէս դանդաղութեամբ
 եւ այն ալ վեր ի վերոյ կերպով պիտի սորվին, այլեւ
 անոնք իւրեանց երջանկութիւն նուիրող զբօսանք մը
 պիտի լինի, եւ սորվածնին ալ իւրեանց սրտին եւ մը
 տալը խորերն հաստատ կերպով պիտի տպաւորուի, եւ
 որոնք անկէջ ետեւ հասարակ տղայական խաղալիկներն
 ալ սոյն ուսման զբօսանքին հետ բաղդատելով, առ ոչ
 ինչս գրեն եւ արհամարհեն պիտի: Վերջապէս գիւտ մը
 բարութիւն մը, որն որ ինչպէս որ ըսինք, անտարակոյս
 քիչ միջոցէն ազգը զարմանալի կերպով իրօք հսկաքայլ

յառաջագիւմութեան վիճակին մէջ պիտի դնէ . եւ որուն վերայ որչափ որ գովութեամբ խօսիմք քիչ է . եւ մեր այս գուրցածներն ալ ոչ այնչափ գովութիւն , որչափ որ անկէց յառաջանալիք սքանչելի արդեանց եւ օգտից նշ կարագրութիւնն է :

Եւ ահաւասիկ այս գիւտին ինչ լինելուն եւ որուն միջոցաւ գտնուելուն , եւ որուն ձեռքով ալ արդիւնաւորուած լինելուն վրայօք հետեւեալին մէջ պիտի խօսիմք :

Եւ Պօլսոյ մէջ տպուած Մուսայք մասեաց անուն օրագրոյն մեծայարգ խմբագիր Պ . Արմենակ Հայկունիին աշխատանքիւն , « Ռատուիական գրասանաց թուղթ » անուամբ , ազգային պատմութիւնը 32 հարցումներով եւ պատասխաններով խիստ համառօտ եւ կանոնաւոր ոճով , 32 հատ կտոր կտոր թուղթի վերայ տպուածք տեսանք , որն որ հասարակութեան մէջ գործածուած կտոր կտոր գրասանաց թուղթերուն հաստութեամբն ձեւովն եւ մեծութեամբն շինուած է . որուն ազգասէր հեղինակն , թէ դպրոցաց եւ թէ հասարակութեան մէջ ընթերցասիրութիւնն շուտով ծաղկեցնելու պատակաւ ի գործ դրած լինելուն համար , եւ միանգամայն այն թուղթերն ինչ կերպով գործածել պէտք լինելուն վրայօք տեղեկութիւն տալով , զատ թուղթի մը վերայ հրատարակած է . ուսկից օրինակելով ամբողջ այս տեղն տպեցինք :

« Մեր ազգին մէջ ընթերցասիրութեան նոր ճաշակ մը տալու նպատակաւ , ահաւասիկ Հայոց պատմութիւնը ամբողջ երեսուն երկու հարցումներով եւ պատասխաններով ի լոյս կընծայեմք միանգամայն եւ նոր դիրքով . յուսալով որ մեր այս փոքրիկ աշխատանքովն փոքրիկ

նուէր մը կհամարուի թէ զպրոցներու եւ թէ հասարակութեան կողմանէ :

Այս աշխատութիւններնուս անունը դրինք (ուսումնական զբօսանայ թուղթ.) վասն զի ինչպէս որ ձեւէն ալ յայտնի է, տեսակ մը խաղի նման պիտի գործածուի սա հետեւեալ կերպով : Թուղթ մը տղայք շուրջանակ ի նստելով, խուճ մը (թէստէ) մէջերնին հաւասարաբար կբաժնեն. յետոյ բաժանողը իւր ձեռքի թուղթերէն մեկուն հարցումը կկարդայ, աջ կողմէն սկսելով չգատասխանողներէն մէյ մէկ թուղթ առնելով, մինչեւ որ մին պատասխանէ որոյ կպարտաւորի հարցնողը՝ իւր հարցումը պարունակած թուղթը տալ, եւ հարցնելու արտօնութիւնը նորա թողուլ : Խաղը կըմնայ՝ տկարներուն ձեռքի թուղթերը հատնելով, եւ ամենէն հմուտին, քովը հաւաքուելով :

Արմենակ Հայկունի :

Անցեալ տարիներն, Վարդ անուն պատուական օրագիրը հրատարակող ընկերութեան անդամ. եւ այժմ ինն ամիսէ ի վեր քաղաքիս Զիտուսեան վարժարանին դասատու : Վանայ Էրէրին գիւղէն Սարգիս Բարսեղեան ճըշմարիտ ազգասէր անձը, 11. Պօլսոյ մէջ իւր հանճարամտութեամբն քանի մը տարուան մէջ ստացած տաղանդներն իւր հայրենակցացը օգտակար ընելու համար, յառաւօտէ մինչեւ երեկոյ շարունակ զարմանալի գործունէութեամբ, աշակերտաց քիչ միջոցին մէջ շատ բան սորվեցնելու ջանքով աշխատած ժամանակը, վերոյիշեալ ուսումնական զբօսանայ թուղթը տեսնելուն պէս, անոր համեմատ ինք ալ քերականութեան համաձայնութեան կանոնաց երեւելիներէն մի միայն հարցումներն զատ

զատ հարիւր հատ կտոր կտոր թուղթի վերայ գրած էր .
 զորոնք այս օրերս եղած հարցաքննութեան ժամանակն ,
 (1) աշակերտաց հաւասար թուով բաժնեց . անոնք ալ
 վերոյիշեալ կանոնին համեմատ , նմանը չտեսնուած այն
 պիտի եռանդուն կերպով կհարցնէին ու կպատասխանէ-
 ին որ , թէ Գերապատիւ Առաջնորդն եւ թէ բոլոր հան-
 դիսականք զարմացան . այնպէս որ նորին Սրբազնութիւնն
 նոցա մէջէն մէկուն խնդիր մը հարցուցած ժամանակը ,
 անհնարին եղաւ առանձին պատասխան առնուլն . այլեւ նո-
 րա դասընկերներն ամէնքն մէկէն միմեանց բերնէն սա-
 տիկ նախանձաւորութիւն մը յափշտակելով , անսխալ կեր-
 պով կպատասխանէին . որոց համար ամէնքն ալ վկայեցին
 թէ արդարեւ այս գիւտին միջոցաւ եւ իւրեանց ազգասէր
 դասատուին ջանքովն հինգ տարուան յառաջադիմութիւն
 ստացած էին : Եւ պատուելի Դասատուն իմացուց որ ակէց
 ետեւ բոլոր ուսմունքներն այս ոճով պիտի սորվեցնէ :

Երանի թէ Վ . Պօլսոյ Ռուսմական Խորհուրդն , բոլոր
 ուսմունքներն ալ սոյն Ռուսմական զբօսանաց թուղթին
 ձեւով եւ համառօտ ոճովն տպագրել տալու տնօրէնու-
 թիւն մը ընելով , բոլոր քաղաքաց ազգային դպրոցներուն
 իւրաքանչիւր տեսակէն գոնէ մէյ մէկ խութ խրկէր . որով
 ազգը տնտարակոյս քիչ միջոցէն անկէց յառաջ գալիք
 քաղմութիւ պտուղներն պիտի վայելէ : Եւ Դասատուք
 ալ պէտք է աշակերտաց հետ սիրով եւ պատուով վար-
 ուելով սորվեցնեն . որոնք եթէ այս կերպն եւ միանգա-
 մայն սոյն վերոյիշեալ ոճն ի գործ դնեն , իւրեանց աշ-

(1) Սոյն միջոցին օրագիրս մամուլի տակ դրուած լինելուն հա-
 մար , յիշեալ հարցաքննութեան հանդէսին նկարագրութիւնն
 յաջորդ թուով պիտի հրատարակուի :

խառուծիւնքն միոյն հաղարապատիկ պիտի արգիւնաւորի ամենայն դիւրութեամբ :

Մենք առ այժմ ազգին կողմէն հրապարակաւ մեր շընորհակալութիւնն եւ երախտագիտութիւնն կնուիրեմք , թէ սոյն գիւտը հնարող ազգասէր Պ . Արմենակ Հայկունիին , եւ թէ զանի գործադրող եւ արգիւնաւորելու համար աշխատող բարեջան դասատու Բարսեղեան Սարգիս Վարժապետին :

Յ . Ս . Կ . Գալիսիճեան .
 Սիւտէն Ս . Լըծուոյն ,

— 0 —

Քաղաքիս լուսակալ Բարձրապատիւ Հաճի Ահմետ Փաշան , որ վեց ամիսէ ի վեր է , քաղաքս եկած է սոյն գարնան միջոցիս այս օրերս ի վարագ եկաւ . ուր տեղ քաղաքիս թէ Գերապատիւ Առաջնորդ Իգնատիոս Արքեպիսկոպոսն , եւ թէ Մեծապատիւ մահտեսի Շարան Պէյն ներկայ էին , որոնք միաբանութեանս հետ ի միասին ազգասիրաբար թէ ի դիմաց ազգին եւ թէ վանքիս վերատեսուչ Հայրենասէր Խրիմեան Մկրտիչ Վարդապետին , նորին վսեմութեան գալուստը պարտ ու պատշաճ եղած արժանավայել յարգանք եւ մեծարանք շնորհաւորեցին . ու զինքն պատուասիրեցին : Որն որ Առատագութեան ուսումնասիրութեան եւ դպրոցական յառաջագիւմութեանց համար ունեցած բողջանացը համեմատ ձիրքերով զարդարեալ , բազմահմուտ լուսաւորեալ եւ քաջ քաղաքագէտ անձ մը լինելով , վանքիս մէջի եղած ազգապանծ հաստատութեանց վրայօք յառաջուց տեղեկու-

Թիւն ստանալէն ետեւ , որոց համար յատկապէս այցելու
 Թիւն ըրած էր , Թէ աշակերտաց Թուոյն , եւ նոցա
 ուսմանց տեսակաց , Թէ վանքիս եկամտից եւ ծախուց
 եւ տնտեսական պիտոյից մատակարարութեանց կարողա-
 րութեանց վերայ , Թէ վանքին հնութեանը եւ ասոնց
 նման շատ մը նշանաւոր հետաքրքրութեան արժանի
 տեղեկութեանց վրայօք մանրամասն հարցուներ ըրաւ :
 Նաեւ տպարանին , դպրոցին աշակերտաց , կահ կարաս-
 եաց , գրասենդինաց եւ Թանգարանին բարեկարգութիւն-
 ներն տեսնալով , ասոնց ամենուն համար ալ որչափ հա-
 նած լինելն , իր սրտին զգացած բերկրութիւնն եւ ուրա-
 խութիւնն . ու Թէ իւր եւ Թէ Օսմանեան Բարեխնամ
 Ստալարութեան այսպիսի յառաջադիմութեանց համար
 ազգին վրայ ունեցած համարմունքն , սէրն , գութն եւ
 խնամքն յայտնելով , սիրալիր խօսքերով զամենքն պատ-
 ուեց : Նաեւ ամէն ազգաց իւրեանց տէրութեան լեզ-
 ուին հմտանալու կարեւորութիւնն յայտնելով , դպրոցին
 մէջ տաճիկերէն լեզուի զաստու մ'ալ կարդելու պէտք
 լինելու առաջարկութիւն ըրած ատենն , նորին Սրբազ-
 նութիւնն Գերապատիւ Վերատեսչին այն մասին հա-
 մար ալ ունեցած բաղձանքը եւ գործադրութեանը հա-
 մար հոգ տանելու վերայ լինելն իմացուց : Նորին
 Վսեմութիւնն վանքիս շէնքերն եւ զուարճալի վայ-
 րերն եւ պարտեզներն պատելէն ետեւ , ուղղեկցութեամբ
 նորին Սրբազնութեան եւ մեծապատիւ Պէյին 'ի բա-
 զաք վերադարձաւ :

ԵՆՁՆԵՆՈՒԷՐ
ԳՈՐԾԵԿԸՆԻ ԲՆԵԿԵՐՈՒԹԵԱՆ

ՈՒՆՆՈՒՄ ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍՈՒՇՆԵՐՆԵՐ ՈՒՆՆՈՒՄ ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ
ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ՍԿՐԻՆՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ ԿՐԹՈՒՄՆԵՐ ԵՄԵՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ ՆԻՒԹԱՅ :


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՈՐԵՒԻԿ ԱՅԺՄԵԱՆ ՈՂԲԱՐԻ ՎԻՃԱ

Հայաստանի վանորեից այժմեան ողբարի վիճա-
կը : 25

Տաղաչափութիւն գերապատիւ Թովուղեան Յա-
կոբ Եպիսկոպոսի վանահօր Սիմ Անպատուայ : 41

Տեսարանք հայրենի յաշարհաց Բաղէշ : 48

Զարմանալի նոր գիւտ մը : 50



Երանանայ ի՞նչ . 2 սնայ ի՞նչ . Թ . 102

Հմայաբանի լազիւտայ ի՞նչ . Թ . 103

Երանանայ Կնիւթ . 2 . 104

ԴԻՆ ՏԱՐԵԱՆ ԸՆԳԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱՆԻԿՈՒՄ

Ի վան . Ի Բաշէն . Ի Մարտի . Ի Արեւի . Եւրոպայ . Ի Կի-
սասն շուր-շնոյ արծաթի Մէճիքի .

Ի Կ . Պօլսէ . Տաճկաստանի ուրեւ Կաշիքի . Եւրոպայ . Եւրո-
պայ . Ի Կիսասն շուր-շնոյ Մէճիքի .

Ի Ռուսաստան . Ի Պարսկաստան չորս արծաթի Մանիքի .
Ճանապարհի թաւալ խաբարիւր արտի վճարի .